

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1929 - ցունուար - 1929

SOMMAIRE

1929 - Janvier - 1929

	էջ		P.
Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ. — Դպրոցական ուղղու- թիւնը	1	P. C. Kibarian. — Le but de nos écoles	1
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ		BIOGRAPHIE	
Հ. Ե. ՏԱՅԵՏԻ. — Գէորգ Ապտուլահ կեանքն և գործունէութիւնը	3	P. I. Dayétsi. — Kévork Abdoullah, sa vie et son œuvre	3
ՊԱՏՄԱԿԱՆ		HISTOIRE	
Յ. ՔԻՐԵՏԵԱՆ. — Նիւթեր Պուլկարահայոց Պատմութեան համար. — Թաթար Բագար- ճըքի հայ զաղուիթը	12	H. Kurdian. — Matières pour l'hi- stoire de la colonie arménienne de Bul- garie: La colonie arm. de Tatar Bazardjik.	12
ԳՐԱԿԱՆ		LITTÉRATURE	
Գ. ՀԵՍԱՆԻ. — Հայ գրականութիւնը տա- պանաբարեւու վրայ. (ԺԶ, ԺԷ, ԺԸ և ԺԹ գար. Կ. Պոլիս)	17	K. Henassère. — Les épitaphes des cimetières arméniens à Constantinople	17
ՄԱՐԻԱ ՍՏԵԼԼԱ. — Առասպելիկ մը — Տոամ — Բանաստեղծութեան (Թրգմ. Հ. Ա. Ղազ- արեան)	22	Maria Stella. — Una fiaba. Drama. Alla poesia. (trad. en vers arm. P. A. Ghazighian)	22
ԼԱՖՈՆՏԵՆ. — Հեղեղ և Գետ (Թրգմ. Մ. Նուրսեան)	23	Lafontaine. — Le torrent et le fleuve (trad. arm. M. Noubarian)	23
Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵԱՆ. — Հանգած եկե- ղեցին (Առ Ս. Խաչն Ալթամարի)	24	P. V. Hovhannessian. — L'église désolée	24
ԳԻՏԱԿԱՆ		SCIENCE	
Հ. Ն. Տ. — Յօրինածական դասաւու- րութիւն բոյսերու և արուեստագիտական նորահնար անունները	25	P. N. D. — Botanique systématique et les nouveaux termes techniques	25
ԱՑԼԵԻԱՑԼԻՔ		DIVERS	
ԽՄԲ. — Միլանի Միխիթարեան վարժա- րանը (1927-28ի տարեշրջանին)	31	Réd. — L'année scolaire 1927-28 du Collège Mékhitariste de Milan	31
* * *. — Վաթիկանեան Մատենադա- րանը	32	* * *. — La Bibliothèque de Va- tican	32

Կ Ո Չ

«ՀԱՅ ԳԻՐ» Ի ԱՇԽԱՏԱՌՐՆԵՐՈՒՆ

Յայտնելով շնորհակալութիւն բոլոր այն Գիւրերուն, որոնք պատասխանեցին նախկին հոշիւ
յղելով իրենց գործերէն մէյժէկ օրինակ, եւ իրենց գրական կեանքը, հիմա կրկին կը խնդրեմ ա-
ւելցնելով ուրիշ խնդրանք մը եւս, այն՝ գոր 1903ին ըրած էի աղղէն, «Մատենագիտութեան» Ա
հասորին «Յատաշարարի տեղոյն մէջ, Ահա թէ ինչ գրքի եմ. «Ես մտադիր էի սոյն Գործիս մէջ
դնել իւրաքանչիւր հեղինակի, թարգմանչի, խմբագրի համառօտ վարքը, իր յուսանկարով եւ 1904ին՝
Խազմակէպի փետրի պրակով կոչ ալ ըրի. բայց հագիւ երեք կամ չորս հոգի պատասխանեցին. նոյնը
կ'ընեմ հիմա եւս՝ աւելի ուժգին եւ գոշաւորագոյն... Եթէ կուս լսելի ըլլայ, Ցաւելուածին մէջ
կ'իրագործեմ և այս փափագս»:

Կը խնդրուի ուրեմն որ իրենց լուսանկարներն ալ դրկեն բոլոր անոնք՝ որոնք ծառայեր են
«Հայ Գիր»ին, զնելով ետեւը իրենց անունն ու ծննդավայրը և ծննդեան թուականը: Ինծի հետ
շնորհակալ պիտի ըլլայ նաեւ Հայ Գրականութիւնը:

Կը խնդրուի հայ թերթերէն հրատարակել սոյն կոչը:

Հասցէս P. Arsène Ghazighian
Mékhitariste

VENISE (Italie)

ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆ

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔԵՊՍԻ. ԴՈՒՐԵԱՆ

Այս տարի յիսնամեայ յոբելանին է Դուրեան Պատրիարքի քահանայական ձեռնադրութեան, որով նաև գրական և ուսուցչական գործունէութեան: Ամէնուն յայտնի է Դուրեան Սրբազանի կատարած դերը թէ՛ իբր եկեղեցական և թէ իբր գրական անձ՝ հայ մշակոյթին համար. հարկաւոր էր իր հայ ազգին մատուցած ծառայութիւնը հանգիստուր առիթով զնահատանքի արժանի ըլլար ընդհանուրէն: Որով իր աշակերտները և զինքը յարգողները պատշաճ նկատած են իր քահանայական ձեռնադրութեան տարեգարմը տօնել. այս նպատակով Յոբելիական կեդրոնական ցանձնաժողով մըն ալ կազմած. հաճախ ձեռնաժողովին կարգադրութիւնները:

Ա. — Հրատարակել հատոր մը 1929 տարւոյ ընթացքին, որ պիտի բովանդակէ Ամեն. Դուրեան Սրբազանի աշակերտներուն, եկեղեցական թէ աշխարհական, բարեկամներուն և հիացողներուն զնահատանքները, տպաւորութիւնները, յուշիկները, եւայլն: Հատորին սկիզբը պիտի գրուի Ամենապատիւ Յոբելեարին լման կենսագրութիւնը, և զորքը պիտի պատկերազարդուի իր կեանքին ալ հալլ հանգրուանները յիշենոյ լուսանկարներով:

Բ. — Յոբելեանի յիշատակին կառուցանել Մատենադարանի յատուկ շէնք մը Ս. Յակոբի շրջակային ճշշ, ԴՈՒՐԵԱՆ, ՄԱՏԵԱՆԴՊԱՐԱՆ, անունով:

Սրբոց Յակոբեանց Աթոռին նշանաւոր պատրիարքներուն անունն ու յիշատակը անմահացած է մէյ մէկ մեծագործութիւններով:

Դուրեան Սրբազանի պատրիարքութեան ստեղծ է որ մտաւորական և գրական ստոյգ շարժում մը, մտաւորական մեծագործութիւն մը, իրականութիւն եղաւ այս պատմական հաստատութեան մէջ, որ շուրջ սակայն Մատենադարանի պահանջներուն համապատասխանող առանձին շէնք մը: Չեռագիր և տպագիր մատենանք, ինչպէս նաեւ թերթեր, կը պահուին իրարմէ անջատ ալլեալ սենեակներու մէջ, մինչ Դուրեան Սրբազանի պատրիարքութեան այս ութը տարիներու ընթացքին հազարաւոր նոր նոր հատորներ աւելցած են և կ'աւելնան զրեթէ մօռն օր, և ասոնց համար տեղ կը պակսի:

Գ. — Յոբելեանի հանդէսները դիւրացնելու համար, յարմարագոյն կեդրոններու մէջ պիտի կազմուին Յոբելիական Օմանդակ Գանձնաժողովներ:

Դ. — Յոբելեանի հանդէսները պիտի հռչակուին 1929 չորսու. 26, 27, 28, 29 տոմարով, թարգմանապես տօնին:

Հանդէսներուն մանրամարնութիւնը ճշդելու համար Յայտագիր մը պիտի պատրաստուի պատշաճ ժամանակին և պիտի հրատարակուի հայ թերթերու մէջ:

Յոբելիական կեդրոնական Գանձնաժողովը առ այժմ կը բաւականանայ այս Յայտարարութեամբ և կը խնդրէ բոլոր հայ թերթերէն ու հանդէսներէն որ բարեհաճին նոյնութեամբ հրատարակել զայն իրենց տիւնակներուն մէջ:

ՆԱԽԹԹՈՒԹԻՒՆ

Ա. — Ամեն. Թորքիայի աշակերտներուն և այլոց կողմէն գրուելիք գրութիւնները պէտք է ղրկել ՍԻՒՄԵՆ հասցեով՝ մինչև 1929 Մայիսի վերջը:

Բ. — Իսկ նոր կառուցանելի Մատենադարանին համար դրամական նպաստ մը տալու յո՞ւստի յոյ՞ ազգայինները, կրնան իրենց նուէրները ղրկել Երուսաղէմ կեդրոնական Գանձնաժողովին հասցեին:

COMITÉ CENTRAL DE JUBILÉ TOURIAN

PATRIACAT ARMENIEN

JERUSALEM - PALESTINE

== ԲԱԶՄԱՎԷՊ ==

1929

86 ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ԲԱԶՄԱՎԷՊ Հայ Մամուլի երկացողն ենրկայացուցիչը՝ կը թեւակոխէ իր գոյութեան 86երորդ տարին:

Հրատարակութիւն Ս. Ղազարու Միութարեան Միաբանութեան, նուիրուած է Հայ Ազգիս բարոյական և իմացական զարգացման: Կ'ուսումնասիրէ ազգային պատմութիւնը, բանասիրութիւնն և հնախօսութիւնը, հայ գեղարուեստն ու մատենագրութիւնը, Հանրութեան ծանօթացնելու իր պատմական կեանքը բնական նոր տունալնեբրով, կը զբաղի միաժամանակ հայ խրդի կեանքով ու զրական շարժումով, նոյնպէս համազգային այժմէական տեղեկութիւններով, գիտական կեանքով և ընկերային խընդիւրներով:

ԲԱԶՄԱՎԷՊ նպատակ ունի զարգացնել և բարձրացնել հայ ժողովրդեան իմացական մակարդակը՝ լիակատար գիտակցութեամբ անոր անցեալ ու ներկայ կեանքին և իր պարունակութեամբ միշտ աւելի հետաքրքրական ու հաճելի դառնալ:

ԲԱԶՄԱՎԷՊի մէջ կը ծանուցուին և կամ գրախօսական տեսութիւններ կը հրատարակուին բոլոր այն գրեթե ուն վրայ՝ որ նուէր կը ստացուին խմբագրութենէս:

ԲԱԶՄԱՎԷՊի ամէն ամսուան սկիզբը լոյս կը տեսնէ և կը ղրկուի իր բաժանորդներուն և պարբերական հրատարակութիւններ փոխանակողներուն:

Դպրոցներու, որբանոցներու և զրական ակումբներու համար բաժանորդագրութեան զիւրութիւններ կը մատուցուին:

ՏԱՐԵԿԱՆ, ԲԱՄԵՆԵԳԻՆՆ Է

ԿԱՆԻՍԻԿ՝ շիւին 12. — և կամ՝ տոյար 3: —

Մեր հասցէն

Rédaction de la Revue "PAZMAVEB,"

S. LAZARE

VENISE (Italie)